

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԻՂԴԵՆ ԳՈԼԴ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ՊԵՌԼԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Հ. Մարգարյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	5
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	9
2.1. Նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը և բնութագիրը	9
2.2. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի նյութական կազմը և տեխնոլոգիական հատկությունները	9
2.3. Տեղամասի հաստատված պաշարները	13
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	14
3.1. Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր, սողանքներ	15
3.2. Կլիմայական բնութագրեր	18
3.3. Մթնոլորտային օդ	21
3.4. Ջրային ռեսուրսներ	21
3.5. Հողեր	24
3.6. Բուսական և կենդանական աշխարհ	26
3.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	29
4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	32
4.1. Ենթակառուցվածքներ	32
4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	38
4.3. Պատմության և մշակույթի հուշարձաններ	44
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	45
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	51
7. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	57
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ	60
9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ	62
Օգտագործված գրականության ցանկ	65

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության տեխնիկական զեկույց, տեխնիկատնտեսական հիմնավորում, տեխնիկատնտեսական հաշվարկ, ճարտարապետաշինարարական նախագիծ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հիմնական փուլ՝ հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց.

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ,

անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով

Հող՝ երկրի մակերևութային բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ.

Արագածի պեռլիտի հանքավայրում արդյունահանման աշխատանքների նախաձեռնողը «Հիդդեն Գոլդ» ՍՊ ընկերությունն է: Ընկերության գտնվելու վայրը՝ (ՀՀ Արագածոտնի մարզ, Արագածավան, Գործարանային փողոց, շենք 3/1:

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտը կազմելիս «Հիդդեն Գոլդ» ՍՊԸ առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի № ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման,

հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների

հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի №1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները;
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի №369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցերը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ձորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին ներկայացվող ընդհանուր պահանջներն են՝

- 1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 2) հիմնադրության փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.
- 3) հիմնադրության փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.
- 4) հիմնադրության փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).
- 5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.
- 6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. *Գտնվելու վայրը*


Արագածի պեռլիտի հանքավայրը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում, Թալինի տարածաշրջանում Արագածավան գյուղից 4.4կմ, Հակկո գյուղից 3.6կմ, Կանչ գյուղից 3.8կմ հեռավորությունների վրա: Հեռավորությունը մինչև Արագածավա, Հակկո և Կանչ գյուղերի մոտակա բնակելի շինությունները կազմում է համապատասխանաբար 4.35կմ, 3.4կմ և 3.6կմ: Հայցվող տեղամասը գտնվում է S-1-63 տեղական նշանակության ավտոճանապարհից մոտ 3.58կմ հեռավորության վրա: Մոտ 1.2կմ հեռավորության վրա են գտնվում Արագածավան գյուղի մշակվող գյուղատնտեսական հողատարածքները (արոտավայրերը, խոտհարքերը, այգիները): Տարածքի իրադրության սխեման ներկայացված է նկար 1-2-ում: Արագածավան, Հակկո և Կանչ գյուղերը մեկը մյուսի հետ և Արագածի հանքավայրի հետ կապված են գրունտային ճանապարհներով (տես՝ նկար 2-ում, գրունտային ճանապարհները տոպոհիմքի վրա ներկայացված են ընդհատվող գծով):

Հանքավայրից մոտ 60մ արևումք անցնում է Սելավ-Մաստարա գետի չորահուններից մեկը, արևելքից, մոտ 108մ հեռավորության վրա անցնում է չոր ձորակ: Սելավ-Մաստարա գետը հոսում է հանքավայրից մոտ 3.1-3.38կմ հարավ: Թալինի ջրանցքի ձախ ճյուղը անցնում է հայցվող տարածքից մոտ 2.4կմ, Թալինի թունելը՝ մոտ 3.9կմ հեռավորությունների վրա:

Վարչատարածքային բաժանման տեսակետից, Արագածի պեռլիտի հանքավայրի հայցվող տարածքը ներառված է Թալին խոշորացված համայնքի Արագածավան գյուղի վարչական տարածքում: Հայցվող տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (ըստ ArmWGS-84 համակարգի). 1) 4469370.0000, 8389660.0000, 2) 4469612.6504, 8389855.3076, 3) 4469420.0000, 8390524.0000, 1) 4469370.0000, 8389660.0000:

2.2. *Նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը, բնութագիրը*


Օգտակար հաստվածքի մակերեսային տեղադրումը, մակաբացման ապարների փոքր հզորությունը թույլ են տալիս պեռլիտի արդյունահանումը կատարել բաց եղանակով, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման:



Արագածի պեղիտի հանքավայր

Նկար 1.

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



Բացահանքի առավելագույն երկարությունը կկազմի մոտ 860մ, լայնությունը՝ մոտ 250մ, օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը մոտ 25մ, մակաբացման ապարների միջին հզորությունը 0.45մ, ընդհանուր օտարման մակերեսը՝ շուրջ 10հա:

Մարվող պաշարները կազմում են շուրջ 200000մ³, արդյունահանվող պաշարները շուրջ 170000մ³, մակաբացման ապարների (կավավազների, ավազների, պեղիտի և պեմզայի մանրախիճ պարունակող բաց-շագանակագույն հողանման զանգված) ծավալը՝ շուրջ 30000մ³:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը նախատեսվում է շուրջ 10000մ³, ծառայման ժամկետը մինչև 20 տարի:

Մակաբացման ապարները տեղադրվելու են գործող բացահանքի եզրագծով՝ արտաքին լցակույտում, հետագայում տեղափոխվելու են արդյունահանված տարածք՝ ստեղծելով ներքին լցակույտ:

Կիրառվելու է ընդլայնական ընթացքաշերտերով, միակող մշակման համակարգը, որի տարրերն են.


- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունը 5մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը 55°,
- հանքակողերի թեքության անկյունը 45°,
- անվտանգության առափների լայնությունը 2մ,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 30մ:

Բացահանքում արդյունահանման աշխատանքները կատարվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնային համալիրի միջոցով: Լցակույտառաջացումը նախատեսվում է բուլդոզերային եղանակով:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով նախատեսվում է կատարել բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով:

Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է բացահանքի շահագործման արդյունքում խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

15.05.2017թ.-ին «Հիդրեն Գոլդ» ՍՊ ընկերությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել է ՇԱԹ-29/565 ընդերքօգտագործման թույլտվությունը, ինչի շրջանակներում իրականացնում է Արագածի պեղիտի հանքավայրի շահագործման աշխատանքներ 66.15հա տարածքում (նկար 3):



Նկար 3.

Ընդհանուր առմամբ, հայցվող տարածքում նախագծվող բացահանքում կիրառվելու են նույն տեխնոլոգիական լուծումները, որոնք 2017 թվականին ներկայացվել են փորձաքննության և 2017 թվականի օգոստոսի 21-ին ստացել ԲՓ-76 դրական փորձաքննական եզրակացությունը: Հումքի մշակումը, տեսակավորումը (բաժանումը ըստ ֆրակցիաների) կատարվում է «Հիդրեն Գոլդ» ՍՊԸ ավտոմատացված հոսքագծերով գործող արտադրամասում, գ. Արագածավան: Նույն տեխնոլոգիան կիրառվելու է հայցվող տեղամասի պեղիտների դեպքում, պեղիտը տեղափոխվելու է գործարան ընկերության բեռնատարերով:

Հանքավայրի մի հատվածը՝ 66.2հա մակերեսով շահագործվում է «Արագածի պեղիտ» ԲԲԸ կողմից, ՇԱԹՎ-29/348 թույլտվության հիման վրա:

2.3. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի նյութական կազմը և տեխնոլոգիական հատկությունները

Արագածի պեղիտի հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին միոցենի կավերը, ստորին պլիոցենի պեղիտները, դրանց ծածկող այլուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ ժամանակակից առաջացումները:

Օգտակար հանածո հանդիսացող պեղիտ-պեմզային նյութը ներկայացված է մեծաբեկորներով ($0.3-1.0\text{մ}^3$), բեկորներով (0.3մ^3) և կտորներով (մինչև 0.2մ^3), բրեկչիանման և գնդաձև գոյացություններով: Բեկորային նյութը թույլ ցեմենտացված է, կազմում է կուտակի ընդհանուր ծավալի մոտ 65%-ը: Կապակցող նյութը

ներկայացված է պեռլիտ-պեմզային թեթև ավազներով: Հոծ պոռլիտները կազմում են օգտակար զանգվածի 83%-ը, լիթոիդային պեմզան՝ 11%, օբսիդիանները՝ 6%:

Հանքավայրի պեռլիտների քիմիական կազմը ներկայացված է աղյուսակ 1-ում, ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1.

Ապարի քիմիական կազմը, %

SiO ₂	Fe ₂ O ₃	Al ₂ O ₃	CaO	Na ₂ O+ K ₂ O	MgO	ԿՇԺ
77.92	0.83	13.06	0.85	7.75	0.25	3.90

Աղյուսակ 2.

Պեռլիտի ֆիզիկամեխանիկական հատկությունները

NN	Ցուցանիշները	Չափ. միավ.	Միջին մեծությունը
1	2	3	4
1.	Ծավալայիրքային խտությունը մինչև փքեցումը	գ/սմ ³	0.914
2.	Ծավալայիրքային խտությունը փքեցումից հետո	գ/սմ ³	0.176
3.	Փքեցման գործակիցը		5.2
4.	Ծավալային զանգվածը (բեկորային նյութի)	գ/սմ ³	1.780
5.	Խճի ամրությունը	գ/սմ ³	2.35
6.	Ծակոտկենությունը	%	24
7.	Ջրակլանումը	%	10.03
8.	Ջանգվածի կորուստը 25 փուլ փորձարկումներից հետո		7.06%

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է նշել, որ Արագածի հանքավայրի պեռլիտները հանդիսանում են բարձրորակ հումք թեթև փքեցված ավազի և խճի արտադրության համար: Փքեցված պեռլիտային ավազն ու խիճը լիովին բավարարում են 10832-91 ԳՈՍՏ-ի պահանջները և երաշխավորվում են օգտագործման շինարարությունում որպես լցանյութ ջերմա-ձայնամեկուսիչ և ջերմակայուն թեթև բետոններում և շաղախներում: Պիտանի են կանազիտի արտադրության համար:

2.3. Հանքավայրի հաստատված պաշարները

Արագածի պեռլիտների հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 19.11.1976թ.-ի №7732 արձանագրությամբ հետևյալ քանակություններով և կարգերով.

Պաշարների կարգը	Վերջնաարտադրանքը	
	փքեցված պեռլիտ, հազ.մ ³	կանազիտ, հազ.մ ³
B	44069.4	31789.0
C ₁	47557.6	46154.6

3. ՇՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սելյամիկ բնութագիր, սողանքներ

Արագածի պեղիտի հանքավայրը տեղադրված է Արագած հրաբխային ծագման լեռնազանգվածի հարավ-արևմտյան նախալեռնային սարահարթի սահմաններում:

Արագած լեռան 2500-300մ բարձրություններից սկսվում են լեռնազանգվածի սանդղակերպ ցածրացող փոքրաթեք լանջերը՝ իրենց վրա բարձրացած տասնայլ խարամային և էքստրուզիվ (Մեծ և Փոքր Արտենի) կոներով: Մերձգագաթային սարահարթերը և մեղմաթեք լանջերը մասնատված են ճառագայթաձև տարածվող, մեծ թվով խոր հովիտներով, որոնք իրենց վերին մասերում ունեն տաշտակաձև, իսկ միջին և ստորին մասերում՝ V-աձև լայնական կտրվածք: Հարավային և արևմտյան լանջերում լայն տարածքում ունեն չոր ձորերը, որոնց մի մասը հեղեղաբեր է: Ստորոտներին դիտվում է հնագույն սառցապատումների հալոցքային ջրերի բերվածքներ:


Փոքր Արտենի էքստրուզիվ գմբեթի հիմքի տրամագիծը հասնում է 100մ: Գմբեթի հիմքում կազմում ուղիտները, որոնք ծածկվում են պեղիտային առաջացումներով:

Մեծ Արտենի և Փոքր Արտենի էքստրուզիվ գմբեթների եռոգացված մնացորդային բարձրունքները կազմված են միոպլիոցենյան թթու լիպարիտ-դացիտային լավաներով, որոնք վերին պլիոցենյան դոլերիտային ծածկոցանման բազալտների հետ միասին կազմում են Թալինի սարահարթի հիմքը:


Շրջանի ծալքաբեկորային լեռների ձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4-ում և 5-ում:

Սողանքային երևույթներ Արագածի հանքավայրի տարածքում չեն դիտարկվել (հիմք՝ Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիր, ՄՀՃԳ, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005), ինչը պայմանավորված է տեղամասի ռելիեֆի առանձնահատկություններով՝ ցածր մերձհորիզոնական սարահարթ: Մոտակա սողանքային մարմինները գտնվում են արդյունահանման նպատակով հայցվող տարածքից ավելի քան 26կմ (Գառնահովիտ գյուղի շրջակայնք) հեռավորության վրա (նկար 6):


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 1-ին սելյամիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 300 սմ/վ² կամ 0.3g (նկար 7):



Նկար 4.



Նկար 5.



Նկար 6.



Նկար 7.

3.2. Հանքավայրի շրջանի կլիման չոր ցամաքային է, խստաշունչ ձյունառատ, բայց կարճատև ձմեռով և զով ամառով:

Ըստ մոտակա Թալին կայանի տվյալների, շրջանում միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 8.0°C, բացարձակ նվազագույնը գրանցվել է -26°C, բացարձակ առավելագույնը՝ 38°C:

Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի անցնում 450 մմ-ից:

Դիտակայանի տվյալներով միջին տարեկան խոնավությունը 66% է, ամենաշոգ ամսվա միջինը՝ 36%, ամենացուրտ ամսվա միջինը՝ 69% :

Օդի ջերմաստիճանի օրական տատանումների ամպլիտուդան մեծ է, առավելագույնը դիտվում է սեպտեմբերին՝ 17°C:

Ստորև 4-9 աղյուսակներում ամփոփված են տեղեկատվություններ օդի ջերմաստիճանի, մթնոլորտային օդի հարաբերական խոնավության, տեղումների և արևափայլի վերաբերյալ (ըստ մոտակա Թալին օդերևութաբանական կայանի տվյալների):

Նկար 8-ում ներկայացված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը:

Աղյուսակ 4.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
-5,2	-4,0	0,6	7,6	12,1	16,4	20,7	20,8	16,5	10,1	3,3	-2,9

Աղյուսակ 5.

Օդի հարաբերական խոնավությունը

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
76	75	68	64	67	61	56	55	55	64	72	77

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան													Ձնածածկույթ		
Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան			
25	27	37	57	79	52	32	22	20	35	28	24	438	64	84	137
18	25	38	32	37	63	41	52	67	36	50	19	67			

Արևափայլի տևողությունը


Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Գումարա- յին
102	130	166	178	228	293	338	326	286	216	137	102	2502

Քամիներ

Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
	Ուղղությունները							
	Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
հունվար	29	9	13	27	11	3	3	5
	2.4	2.2	2.6	2.9	2.1	2.2	2.6	3.6
ապրիլ	22	8	13	27	15	4	4	7
	3.3	2.4	2.6	3.6	2.9	3.5	3.2	4.1
հուլիս	31	8	9	25	12	3	3	9
	3.5	2.6	2.4	3.2	2.4	2.7	3.7	4.1
հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7
	2.9	2.2	2.4	3.0	2.2	2.8	2.7	3.9

Քամիներ

Ամիսներ	Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
հունվար	50	1.5	1.9	49
ապրիլ	33	2.2		
հուլիս	36	2.2		
հոկտեմբեր	42	1.8		



Նկար 8.

3.3. Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի մշտապես գործող դիտակայան, որը կապված է պետական շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի հետ, Արագածի պեռլիտի հանքավայրի տարածքում և հարակից շրջանում չկա:

Հանքավայրի ամենամոտ գտնվող բնակավայրը Արագածավանն է, որտեղ մշտական բնակչությունը 01.01.2022թ.-ի դրությամբ ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 5975 մարդ:

Բնակչությունը զբաղվում է հիմնականում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

2022 թվականի հոկտեմբերի երրորդ տասնօրյակում Արագածի պեռլիտի հանքավայրի տարածքում կատարվել է մթնոլորտային օդի դիտարկում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. փոշի 0.21մգ/մ^3 , ածխածնի օքսիդ 0.40մգ/մ^3 , ազոտի օքսիդ 0.0089մգ/մ^3 և ծծմբի երկօքսիդ 0.020մգ/մ^3 :

Արդյունահանման աշխատանքների աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները: Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO_2 պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՄԹԿ կազմում է 0.15մգ/մ^3 , միջին օրեկան ՄԹԿ՝ 0.05մգ/մ^3 :

3.4. Ջրային ռեսուրսներ

Հայցվող տեղամասերի շրջանը սակավաջուր է: Հիմնական ջրագրական միավորը Սելավ Մաստարան գետն է, որի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 1635կմ^2 , որը հոսում է հայցվող տարածքից $3.1\text{-}3.38\text{կմ}$ հեռավորության վրա: Գետի ակունքն ընկած է Արագածի լեռնազանգվածի հարավային լեռնալանջերի վրա՝ $3100\text{-}3300$ մ բարձրություններում, իսկ ավազանի ամենացածր կետը ընկած է Մեծամոր գետի ակունքներին մոտ տարածքում՝ 849 մ բարձրության վրա:

Սելավ-Մաստարան իրենից ներկայացնում է ժամանակավոր գործող հեղեղատային գետահուն: Առկա վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձրևային 70 հորդացումների ժամանակ կարող է դիտվել $40\text{մ}^3/\text{վ}$ և ավելի ելք, ապա խոշոր սելավների ժամանակ կարող է դիտվել $170\text{մ}^3/\text{վ}$ ելք (1955թ.):

Գետի ջրհավաք ավազանի որոշ հիդրոգրաֆիական բնութագրիչները ներկայացված են ստորև աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

Ակունքի նիշը, մ	Գետաբերանի նիշը, մ	Միջին բարձրություն, մ	Ավազանի մակերես, կմ ²	Երկարություն, կմ
3289	849	1517	1635	98

Սելավ-Մաստարայի հոսքի ձևավորման մեջ մեծ է ձնածածկույթի դերը: Միջին հաշվով գետի սնուցման ավելի քան 40%-ը բաժին է ընկնում ձնահալոցքային ջրերին, քանի որ գետային հոսքի ձևավորման համար ձյան պաշարների կուտակման հիմնական գոտին 1800-2800մ ընկած բարձրություններն են, հոսքի մնացած ծավալի մեջ իր հսկայական դերն ունեն անձրևային ջրերը, և հատկապես հորդառատ անձնները, որոնք նպաստում են սելավների ձևավորմանը:

Սակավաջուր ժամանակահատվածում գետը գրեթե չորանում է: Մաստարայի սելավները կրկնվում են մոտավորապես 2-3 տարին մեկ անգամ: Մաստարայի սելավի մասին տեղեկություններ կան դեռևս 1905թ., որոնք բոլորն էլ եղել են ցեխաքարային բնույթի: Սելավ-Մաստարայի սելավային հոսքերը հիմնականում ձևավորվում են գարնանային և ամառային հորդառատ անձրևների հետևանքով, հազվադեպ նաև ձնահալոցքային ջրերից: Հիդրոլոգիական տարեգրերում առկա է տեղեկատվություն, որ Սելավ-Մաստարայում դիտվել է 165-170մ³/վ սելավային ելքեր:

Հայցվող տարածքից 60մ արևելք և 108մ արևմուտք անցնում են Սելավ-Մաստարա գետի չորահունները (նկար 9):


Հիդրոերկրաբանական տեսակետից հայցվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, ինչը պայմանավորված է տարածքը կազմող հրաբխային ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններով, ծակոտկենությամբ: Հանքավայրի տարածքից մթնոլորտային տեղումները՝ ինֆիլտրացվելով չեղքավորված, ծակոտկեն տուֆերի հաստվածքով, բեռնաթափվում են չորահուններում:

Ջրերի հոսքը դեպի ապագա բացահանք հնարավոր է միայն մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնց քանակը չեն գերազանցում 400մմ/տարի:

Քանի որ տարածքը կազմող պեդիտ-պեմզային փուխր առաջացումները բնութագրվում են բարձր ջրթափանցելիությամբ, բացահանք ներթափանցող ջրերը ենթարկվում են բնական դրենաժի:

Հանքավայրից մոտ 2.4 հեռավորության վրա անցնում է Թալինի մայր ջրանցքի ձախ ճյուղը և մոտ 3.5 կմ հեռավորության վրա՝ Թալինի ջրատար թունելը: Թալինի ջրանցքը սկիզբ է առնում Ախուրյանի ձախ ափից: Սնվում է Ախուրյանի ջրամբարի ամբարտակված ջրերից: Առաջին հերթը շահագործման է հանձնվել 1957-ին, երկրորդը՝ 1974-ին, երրորդը՝ 1986-ին: Մայր ջրանցքի երկարությունը 91 կմ է, բաժանարար ցանցինը՝ 118 կմ:

Մայր ջրանցքը բաժանվում է աջ և ձախ ճյուղերի: Աջ ճյուղի երկարությունը 18 կմ է (այն Արաքս գ. մոտ միանում է Արմավիրի ջրանցքին), ձախինը՝ 17 կմ: Ջրթողունակությունը 30 մ³/վ է (աջ ճյուղինը՝ 23 մ³/վ, ձախինը՝ 7 մ³/վ): Ոռոգում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի մոտ 24 հազ. հա հողատարածք:



Նկար 9.

3.5. Հողեր

Հանքավայրի շրջանի հողային ծածկույթը ներկայացված է բաց-շագանակագույն և շագանակագույն, գորշ կիսաանապատային հողերով:

Հողերի բնական տիպերի բաշխվածությունը երկրաբանական ուսումնասիրության համար ընտրված շրջանում բերված է նկար 10-ում:

Արագածի հանքավայրի տարածքում ձևավորված, հստակ տարանջատվող հողային ծածկույթ չկա:

Հանքավայրի մերձմակերևութային մասը ներկայացված է 0.45մ առավելագույն հզորությամբ բաց-շագանակագույն խճաքարային-քարքարոտ, լիթոգեն-բեկորային կարբոնատային-ցեմենտացված փոքր հզորության հողանման զանգվածով, որին խառնված են կավավազների, ավազների, պեռլիտի, պեմզայի և օբսիդիանի տարաչափ բեկորային զանգված:

Այս հողանման առաջացումներն ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, զգալի կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշեհատիկային կամ վառոդանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 29%:


Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.3%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր:

Հումուսի պարունակությունը չնչին է՝ մինչև 0.85%, CO_2 -ի պարունակությունը կազմում է 3.1%, CaSO_4 -ի պարունակությունը՝ 0.06%, կլանված հիմքերի գումարը 28.6մգ/էկվ 100 գ հողում:

Հանքավայրի տարածքից 2022 թվականի հոկտեմբերի երրորդ տասնօրյակին վերցվել է նմուշ, որի քիմիական բաղադրությունում մասնակցում են սիլիցիում 62217մգ/կգ, կալիում 6225մգ/կգ, կալցիում 42197մգ/կգ, մանգան 2073մգ/կգ, ծարիր <5մգ/կգ, մոլիբդեն <5մգ/կգ, կապար 10.2մգ/կգ, պղինձ 14մգ/կգ :

Հայցվող տարածքում նախկինում խախտված, վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ չկա:

ՀԱՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Շագանակագույն խճաքարային-քարքարոտ լիթոգեն-բեկորային կարբոնատային-ցեմենտացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- 2 - Բաց-շագանակագույն տեղ-տեղ խճաքարային-քարքարոտ լիթոգեն-բեկորային կարբոնատային-ցեմենտացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- 3 - Գորշ կիսաանապատային տիպիկ քարքարոտ միջին հզորության կավավազային թույլ հողմահարված

Նկար 10.

3.6. Բուսական և կենդանական աշխարհ

Տարածքին բնորոշ է կիսաանապատային օշինդրա-էֆեմերային բուսականությունը (նկար 11):



Նկար 11.

Տարածքի դիտարկման ժամանակ արձանագրվել են հոտավետ սիգախոտ, լերդախոտ, օշինդր, կապար, հազարատերևուկ, ավյաբույս:

ՀՀ տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշումը: Համաձայն դրա, Արագածի պեռլիտի հանքավայրի շրջանում հանդիպում են հետևյալ պահպանվող տեսակները.

Աղյուսակ 11.

Բուսատեսակը	Կարգավիճակը	Տարածումը	Առանձնահատկությունները	Պահպանության միջոցառումները
1	2	3	4	5
Հիրիկ նրբագեղ (Iris elegantissima Sosn.)	Վտանգված տեսակ: Կոկկասի էնդեմիկ	Արագած գյուղի շրջակայք (հայցվող տարածքից ավելի քան 4կմ), Արտենի լեռնագագաթ (հայցվող տարածքից մոտ 6.5կմ)	Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 750-2000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, մերգելային լանջերին, երրորդական դարաշրջանի կարմիր կավերի վրա, օշինդուհիների կողքին	Պահպանվում է «Սևան» ազգային պարկի, «Էրեբունի» և «Խոսրովի անտառ» պետական արգելոցների տարածքում:

			անապատում, ֆրիգանդիդներում, լեռնային տափաստանում:	
--	--	--	---	--

1	2	3	4	5
Խանձիլ հաղարջի (<i>Rheum ribes</i> L.)	Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ	Արագած գյուղի շրջակայք (հայցվող տարածքից ավելի քան 4կմ)	Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200-1400 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ տեղերում:	Պահպանություն չի իրականացվում:
Սոխ Օլթիի (<i>Allium oltense</i> Grossh.)	Վտանգված տեսակ	Արագած գյուղի շրջակայք (հայցվող տարածքից ավելի քան 4կմ)	Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1500-2300 մ բարձրությունների վրա, քարքարոտ լեռնային տափաստանում:	Պահպանություն չի իրականացվում:

Հայցվող տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված, վերոնշված տեսակներ հայտնաբերելու նպատակով:

Դիտարկումների արդյունքներով հայցվող տարածքում հիրիկ նրբագեղ, խանձիլ հաղարջի և սոխ Օլթիի տեսակներ չեն արձանագրվել:

Տարածաշրջանի կենդանական աշխարհը շատ աղքատիկ է: Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջանի կիսաանապատային-տափաստանային լանդշաֆտներում դիտարկվել են սովորական դաշտամուկ, նապաստակ, աղվես, պեղիտի կույտերի վրա նշվել են հետքեր, որոնք պատկանում են գայլին կամ շնագայլին: Հանքավայրի շրջանում (1.2-1.5կմ հեռավորության վրա) գյուղատնտեսական հանդակներով զբաղեցված տարածքներում (ցանքսեր, այգիներ) արձանագրվել են արտույտ, շամփրուկ, սոխակ: Մորեխներից քանակապես գերակշռում է սովորական իտալական մորեխը, բնորոշ են ձիուկներ և մթնաթներ: Բազմաթիվ են բզեզները՝ սև և փոսիկավոր կարաբուսներ, գերեզմանափորը, գլաֆիրուսները, բրոնզաբզեզները, եգիպտական խավարասեր, աղոթարարներ, անապատային ճռիկ: Անասնապահության համար օգտագործվող տարածքներում՝ գոմաղբով հարուստ հողածածկություն հանդիպում են գոմազբաբզեզներ, բազմաթիվ են մրջյունները:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, Արագածի հանքավայրի շրջանում հայտնի են ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

Աղյուսակ 12.

Տեսակը	Կարգավիճակը	Ապրելավայրերը	Պահպանության միջոցառումները
1	2	3	4
Ժայռային դրախտապան (Emberiza buchanani Blyth)	Սակավաթիվ օլիգոտոպային տեսակ:	Արագածի հարավային լանջեր՝ մինչև 1900մ բարձրությունները:	Բնադրավայրերի մի մասը գտնվում է «Խոսրովի անտառ» արգելոցի տարածքում:
Փոքրասիական գետնասկյուռ (Spermophilus xanthoprymnus Bennet)	Նեղ արեալային տեսակ է խիստ մասնատված արեալով:	Արագածոնի մարզի հարավ-արևմտյան անտառազուրկ տարածքներ: Բնակեցնում է նախալեռնային կիսաանապատի վերին մասերը, լեռնային տափաստանը, մարգագետնային տափաստանը և, երբեմն՝ ենթալպյան գոտու ստորին մասը 1100-2400 մ ծ.մ. բարձրություններում՝ գերադասելով խոպան հողերը:	Պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկում:
Շիդլովսկու դաշտամուկ (Microtus (Sumeriomys) schidlovskii Argyropulo)	Էնդեմիկ ենթատեսակ է:	Արագածոնի մարզի արևմտյան և հյուսիսային մասեր: Չոր-լեռնային, լեռնային և մարգագետնային խոպան տափաստանները, դաշտերի միջակայքները, ցանքատարածությունները, այգիները և բանջարանոցները, որոնք գտնվում են համապատասխան բարձրություններում:	Չեն իրականացվում:
Փոքր ճագարամուկ (Allactaga elater Lichtenstein)	Նեղ արեալային էնդեմիկ տեսակ, խիստ մասնատված արեալով:	Արագածոնի մարզ 800-1200մ ծ.մ. բարձրություններում: Կավային և խճաքարային կիսաանապատներ, աղուտներ և փոքր ավազուտներ (տակիրներ), չոր լեռնատափաստանի աղուտային և անապատացած լճակներ, հաճախ	Փոքր ճագարամուկն ոչ մեծ պոպուլյացիաները պահպանվում են «Խոսրովի անտառ» արգելոցում: Հավանաբար, մի քանի առանձնյակներ կան «Էրեբունի» արգելոցում:

		աղուտային, ավելի հազվադեպ՝ օշինդրային բուսական խմբավորումներով:	
--	--	--	--

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Աղյուսակ 12-ում նշված կենդանական տեսակները «Հիդդեն Գոլդ» ՍՊԸ կողմից հայցվող տարածքում չեն դիտարկվել:

3.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Արագածի պեռլիտի հանքավայրը, դրա հարակից շրջանը անմիջական սահմաններ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ չունի: Տարածքին ամենամոտը՝ «Արագածի ալպյան» պետական արգելավայրն է, որի առավել մոտ գտնվող հատվածը տեղակայված է ավելի քան 41 կմ հեռավորության վրա: Արգելավայրը կազմավորվել է 1959 թվականին Արագած լեռան սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները: ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը (աղյուսակ 13):

Աղյուսակ 13.

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ


5.	«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ

1	2	3
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ
11.	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
12.	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
13.	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
14.	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ
15.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն (բնապատմական համալիր)	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
16.	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
17.	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ
18.	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
19.	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

20.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
21.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին

1	2	3
22.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
23.	«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա

Հանքավայրի տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանները «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոնն է և «Փոքր Արտենի» հրաբուխը: Հայցվող տարածքի և բնության հուշարձանների միջև հեռավորությունները կազմում են համապատասխանաբար մոտ 7կմ և 6.4կմ (ուղիղ գծով) (նկար 11):



Նկար 11.

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

4.1. Ենթակառուցվածքներ

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հայցվող տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում:

Մարզի տարածքը 2756 քառ.կմ, ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը կազմում է (9.3%):

Գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 218,218.8 հա է (կամ մարզի տարածքին շուրջ 79.2%), որը կազմում է ՀՀ-ի՝ 2,045,472.2 հազար հա-ի 10,67 %-ը, այդ թվում՝ վարելահողեր 54,105.7 հա: Բնակավայրերի հողերը կազմում են մարզի հողերի շուրջ 6.3%, իսկ անտառային հողերը շուրջ 3.95%:

ՀՀ Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակ, Ապարան, Արագած և Թալին տարածաշրջանները:

Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար՝ ամենամեծը Ապարանի ջրամբարն է՝ մակերեսը 7,9 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ/խ, օգտակարը՝ 81 մլն.մ/խ, ջրթողունակությունը վայրկյանում 18 խորանարդ մետր: Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ 50մ, երկարությունը՝ 200մ: Տարեկան մարզում առկա ոռոգման ջրի ծավալը կազմում է մոտ 520 մլն.մ/խ: Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85մլն.մ/խ-ն, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս գալիս մարզի տարածքից: Մարզի տարածքով է անցնում Արգնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

ՀՀ Արագածոտնի մարզում մշտական բնակչության թվաքանակը կազմում է՝ 124.6հազ. մարդ այդ թվում՝ քաղաքային 26.5 հազ. մարդ, գյուղական՝ 98.1 հազ. մարդ:

Ազգաբնակչության 93,7%-ը հայ են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ և այլն:

Բնակչության մեծամասնությունը կուտակված է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում, բնակչության խտությունը կազմել է՝ 36-89 մարդ 1 կմ², այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 64% մակերեսով կազմում է մարզի 46.5%: Ամենացածր խտությունը՝ Արագածի տարածաշրջանում է կազմել է՝ 3 մարդ 1 կմ² և Թալինի տարածաշրջանում կազմել է՝ 30 մարդ 1 կմ²: Թալինի տարածաշրջանում 01.01.2021թ.-ի դրությամբ մշտական բնակչությունը կազմել է 31.7հազ. մարդ այդ թվում՝ քաղաքային 4.0 հազ. մարդ, գյուղական՝ 27.7 հազ. մարդ:

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիները՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան–Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր –Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը արևմտյան հատվածով հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին շուրջ 30 կմ, որը սակայն չի թողնում եական ազդեցություն մարզի տնտեսական զարգացման վրա:

Մարզի բնակչության շուրջ 87% հնարավորություն ունի օգտվելու կանոնավոր իրականացվող երթուղիներից:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սելլ / USU ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 98%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով /օպտիկամանրաթելային և եթերային-շարժական/: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Լարային հեռախոսակապ ապահովում է «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ) և «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (Ռոստելեկոմ ապրանքանիշ): Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի բնակավայրերի 88%-ը:

Մարզի 114 բնակավայրերում գործում է «Հայփոստ» ՓԲԸ մասնաճյուղերը, ապահովելով մարզի համայնքների 100% ծածկույթը:

Եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածքային բաժնի կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 92% ծածկույթը:

Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, ինչպես նաև Աշտարակում՝ կաբելային «ԱշտարակԷլիտTV» տեղական ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև «Հանրային ռադիոն», որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ: Մարզում առկա է էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց:

Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն, Արագածոտնի մարզում տարեկան 38.9 մլն. կՎտժ էլեկտրական էներգիա են արտադրում 6 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ մոտ 15.95 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, որը կազմում է Հայաստանի ՓՀԷԿ երի արտադրած ընդհանուր 977 000 ՄՎտժ էներգիայի շուրջ 4%:

Գազաֆիկացման մակարդակը մարզում բավականին ցածր է, 114 համայնքներից 61-ը (53.5%) գազաֆիկացված են, որտեղ բնակվում են մարզի բնակիչների շուրջ 63.9 %:

Մարզի տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում «Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊԸ-ն, որը մարզի և հանրապետության այլ վայրերի բուժապասարկման կազմակերպություններից՝ պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասազերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

Միևնույն ժամանակ կոշտ կենցաղային փաթոնների համար թվով 59 համայնքներում կատարվել է հողհատկացում, սակայն փաստացի գործում է 9 աղբավայր: Աղբահանությունը մասնագիտացված բեռնատարերով իրականացվում է միայն քաղաքային բնակավայրերում, մասնակի կերպով, իսկ գյուղական բնակավայրերում միայն հարմարեցված տեխնիկական միջոցներով (ինքնաթափեր, լաֆետներ, այլ):

Մարզի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, որը սակայն միացված չէ գործող մաքրման կայաններին:

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ըմպելիքի արտադրությունն է կան խաղողի վերամշակման և գինու հումքի ստացման) ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Արդյունաբերական արտադրանքը կազմել է 44182.2մլն.դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 97.6%: Ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների ներկայացված է հետևյալ կերպ.

- հանքագործական արդյունաբերություն – 2010.7մլն.դրամ,
- մշակող արդյունաբերություն – 37565.8մլն.դրամ,
- էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում – 4138.5մլն.դրամ,
- ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում և վերամշակում – 467.2մլն.դրամ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է ստորև աղյուսակ 14-ում:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքում բուսաբուծությունը կազմում է 35.2մլն.դրամ, անասնաբուծությունը՝ 47.3մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 17560հա, բերքատվությունը՝ 14.6g/հա, համախառն բերքը՝ 40.9հազ.տոննա:

Կարտոֆիլի ցանքաստարածությունները կազմել են 1062հա, բերքատվությունը՝ 268.2g/հա, համախառն բերքը՝ 28.5հազ.տոննա:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքաստարածությունները կազմել են 557հա, բերքատվությունը՝ 139.0g/հա, համախառն բերքը՝ 10.9հազ.տոննա, բոստանային կուլտուրաների համար համապատասխանաբար՝ 83հա, 141.8g/հա, 1.2հազ.տ:

Աղյուսակ 14.

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Volume of produced production, in current prices ¹ , mln.drams	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Realisation of fabricated products in current prices ¹ , mln.drams	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of industrial production, %	
ԱՐԱԳԱՏՈՏՆԻ ՄԱՐԶ ARAGATSOTN MARZ				
<i>Ամբողջ արդյունաբերությունը</i>	44 182.2	44 227.2	97.6	<i>Total industry</i>
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
<i>Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում</i>	2 010.7	1 983.6	121.9	<i>Mining and quarrying</i>
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	2 010.7	1 983.6	121.9	other mining and quarrying
<i>Մշակող արդյունաբերություն</i>	37 565.8	37 637.8	96.5	<i>Manufacturing</i>
<i>որից՝</i>				<i>of which :</i>
սննդամթերքի արտադրություն	25 917.9	25 867.3	103.8	manufacture of food products
խմիչքների արտադրություն	6 438.8	7 214.1	105.5	manufacture of beverages
թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	28.3	28.3	141.7	printing and reproduction of recorded media
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	302.6	308.9	4.4 անգ times	manufacture of chemicals and chemical products
ոետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	845.4	874.2	127.2	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	128.2	129.7	82.6	manufacture of other non-metallic mineral products
համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	114.0	114.0	94.3	manufacture of computer, electronic and optical products
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	235.5	235.5	244.9	manufacture of machinery and equipment n.e.c.
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	3 395.0	2 705.7	46.4	manufacture of jeweller products
<i>Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում</i>	4 138.5	4 138.5	96.8	<i>Electricity, gas, steam and air conditioning supply</i>
<i>Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում</i>	467.2	467.2	108.2	<i>Water supply, sewerage, waste management and remediation activities</i>

Գյուղատնտեսական համախառն արտադրանքում բուսաբուծությունը կազմում է 35.2մլն.դրամ, անասնաբուծությունը՝ 47.3մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 17560հա, բերքատվությունը՝ 14.6g/հա, համախառն բերքը՝ 40.9հազ.տոննա:

Կարտոֆիլի ցանքսատարածությունները կազմել են 1062հա, բերքատվությունը՝ 268.2g/հա, համախառն բերքը՝ 28.5հազ.տոննա:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 557հա, բերքատվությունը՝ 139.0g/հա, համախառն բերքը՝ 10.9հազ.տոննա, բոստանային կուլտուրաների համար համապատասխանաբար՝ 83հա, 141.8g/հա, 1.2հազ.տ: Պտղի և հատապտղի տնկարկների համար այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 6232հա, 84.3g/հա և 49.1հազ.տոննա, խաղողի տնկարկների համար՝ 1409հա, 135.6g/հա և 16.8հազ.տոննա:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 71.3հազ.գլուխ, որից կովերինը՝ 33.8հազ.գլուխ, խոզերինը՝ 15.6հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 87.8հազ.գլուխ, ձիեր՝ 0.4հազ.գլուխ:

Իրացվել է 20.4հազ.տ կենդանի և թռչուն սպանդի համար, 76.3 տոննա կաթ, 81.0մլն.հատ ձու, 148.0տոննա բուրդ:

Մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 22564.8մլն.դրամ, ծառայությունների ծավալը՝ 12079.8մլն.դրամ, կացության և հանրային սննդի օբյեկտների շրջանառությունը՝ 519.4մլն.դրամ, առողջապահությունն ու բնակչության սոցիալական սպասարկումը՝ 213.4մլն.դրամ, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 9419.7մլն.դրամ:

Գործազուրկների թիվը կազմել է 5.5հազ.մարդ, որից կանայք՝ 1.4հազ.մարդ: Մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը եղել է 119464դրամ:

Կենսաթոշակառուների գրանցված քանակը՝ 151 մարդ, կենսաթոշակի միջին չափը՝ 41856դրամ:

Նախադպրոցական հաստատությունների քանակը կազմել է 26, հաճախող երեխաների քանակը՝ 1385, մանկավարժների քանակը՝ 274, մեկ մանկավարժիմծն ընկնող երեխաների թվաքանակը՝ 5.1:2020/2021 ուսումնական տարում Արագածոտնի մարզում գործել է 120 հանրակրթական դպրոց, աշակերտների թվաքանակը 18366,

մանկավարժների թվաքանակը՝ 2102, մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը՝ 8.7: Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների քանակը 2020/2021 ուսումնական տարում կազմել է 12, աշակերտների թվաքանակը՝ 130:

Գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական 3 հաստատություններ, դրանցում կրթվել են 235սան, աշխատել են 71 մանկավարժ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը կազմել է 1, ուսանողների թվաքանակը՝ 62, մանկավարժների թվաքանակը՝ 21, ուսանողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով՝ 3.0:

Գործում են 1 թանգարան և 52 գրադարան:

5 մարզական կազմակերպություններում մարզվում են 569 մարզիկ, օլիմպիական մարզաձևերով խմբերի քանակը՝ 45, ոչ օլիմպիական մարզաձևերով՝ 2:

4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Արագածի պեռլիտի հանքավայրի տարածքը գտնվում է Թալին խոշորացված համայնքի Արագածավան բնակավայրի սահմաններում:

Խոշորացված համայնքը ձևավորվել է ՀՀ կառավարության 09.06.2022թ.-ի թիվ ՀՕ-266-Ն օրենքի համաձայն և իր մեջ ներառում է Թալին քաղաքը, Ագարակավան, Ակունք, Աշնակ, Արագածավան, Արտենի, Գառնահովիտ, Գետափ, Դաշտադեմ, Դավթաշեն, Դիան, Եղնիկ, Զարինջա, Զովասար, Թաթուլ, իրինդ, Լուսակն, Ծաղկասար, Կաթնաղբյուր, Կարմրաշեն, Կաքավաձոր, Հացաշեն, Զորագյուղ, Մաստարա, Ներքին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Նոր Արթիկ, Շղարշիկ, Ոսկեթաս, Պարտիզակ, Սուսեր, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն և Ցամաքասար գյուղերը: Մինչ վերը նշված օրենքի ընդունումը Արագածավան համայնքը նույնպես համարվում էր խոշորացված և ձևավորվել էր Արագածավան, Արտենի, Գետափ, Լուսակն համայնքների միավորման արդյունքում: Համայնքի կենտրոնը Արագածավան գյուղն է: Արագածավան համայնքի վարչական տարածքի և տնտային տնտեսությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15.

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
1	Արագածավան	12372.54	1083	1293
2	Արտենի	3707.13	842	922
3	Լուսակն	3100.0	45	53
4	Գետափ	2037.79	36	78

Մինչև 2022 թվականի խոշորացումը Արագածավան համայնքի հողային ֆոնդը ներկայացված էր հետևյալ կերպ (01.11.2020թ.-ի դրությամբ):

Աղյուսակ 16.

Հ/Հ	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Ընդամենը
1	2	3	4
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահողեր	5659.49
1.2		բազմ տնկարկներ	1268.58
1.2.1		այդ թվում	
1.2.2		խաղողի այգի	990.37
1.2.3		այլ բազմամյա	278.21
1.3		խոտհարք	
1.4		արոտ	11266.22
1.5		այլ հողատեսքեր	1666.70
1		ընդամենը	19860.99
2.1	2. Բնակավայրերի	բնակելի	359.84
2.1.1		այդ թվում	359.29
2.1.2		այգեգործական	
2.2		հասարակական	21.70
2.3		խառը	6.98
2.4		ընդհանուր	66.22
2.5		այլ հողեր	48.14
2		ընդամենը	502.87
3.1	3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակության օբ.	արդյունաբերական	43.28
3.2		գյուղատնտեսական	60.87
3.3		պահեստարանների	1.12
3.4		ընդերք	216.18
3		ընդամենը	321.45
4.1	4. Էներգետիկայի, տրասպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.	էներգետիկայի	1.28
4.2		կապի	0.04
4.3		տրանսպորտի	61.91
4.4		կոմունալ	1.23
4		ընդամենը	64.46

5.1	5. Հատուկ պահպանվող տարածքներ	բնապահպանական	
5.1.1		այդ թվում	
5.1.2		արգելոցներ	
5.1.2		ազգային պարկ	
5.1.3		առողջարանական	
5.2		հանգստի	
5.3		պատմական և	21.63
5.4		մշակութային	
5		ընդամենը	21.63
6	Հատուկ նշանակության	Ընդամենը	1215.0

1	2	3	4
7.1	7. Անտառային	անտառ	203.35
7.2		թփուտ	
7.3		վարելահող	
7.4		խոտհարք	
7.5		արոտ	
7.6		այլ հողեր	
7			ընդամենը
8.1	8. Ջրային	գետեր	151.54
8.2		ջրամբարներ	
8.3		լճեր	
8.4		ջրանցքներ	80.81
8.5		հիդրոտեխ. և ջրատնտեսային	3.71
8			ընդամենը
9.1	9. Պահուստային	աղբուտներ	
9.2		ավազուտներ	
9.3		ճահիճներ	
9.4			
9.5		այլ անօգտագործելի	
9			ընդամենը
Ընդամենը հողեր			22425.82

Ոռոգվող հողերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.

Հ/Հ	Նպատակային նշանակության	Գործառնական նշանակության, հողատեսք	Ընդամենը ոռոգվող հողեր
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող	4619.8
1.2		բազմամյա տնկարկներ, ընդամենը	1268.0
1.2.1		այդ թվում պտղատու	990.5
1.2.2		խաղողի այգի	277.6
1.2.3		այլ	

1.3		խոտհարք	
1.4		արոտ	
1.5		այլ հողատեսքեր	
1		ընդամենը	5887.8
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման	284.6
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր	
2.1.2		այգեգործական	
2.2		ընդհանուր օգտագործման	
2.3		այլ հողեր	
2		ընդամենը	284.6
Ընդամենը ոռոգվող հողեր			6172.4

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով հայցվող տարածքը բնակավայրի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես համայնքային սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության հող՝ արոտավայր (կադաստրային ծածկագրեր՝ 02-016-0219-0667, 02-016-0219-0657, 02-016-0219-0664): Արագածավան համայնքում (մինչև 2022 թվականի խոշորացումը) առկա բնակչության թիվը կազմել է 10021 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 4800 և կանայք՝ 5221: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է աղյուսակում:

Աղյուսակ 18.

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2022 թ. դրությամբ)

Ցուցանիշները	Ընդամենը համայնք	գ. Արագած- ավան	գ. Արտենի	գ. Գետափ	գ. Լուսակն
1	2	3	4	5	6
Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	10020	5975	3674	137	234
Տղամարդիկ	4821	2931	1687	70	133
Կանայք	5199	3044	1987	67	101
0-6 տարեկան , այդ թվում՝	749	462	250	15	22
7-17 տարեկան	1316	853	398	22	43
18-62 տարեկան	6989	4012	2737	81	159
63-ից բարձր տարեկան	966	648	289	19	10
Կենսաթոշակառուներ, այդ թվում՝					
Հաշմանդամության և աշխատանքային					
Փախստականներ	-	--	-	-	-
Միակողմանի ծնողագույրկ երեխաներ		9	21		

Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ			-		
Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ			-		
Արցախյան պատերազմի մասնակիցներ			-		
Հաշմանդամներ		136	98		
Նպաստառու ընտանիքների թիվը		231	109		
Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը			4		
1	2	3	4	5	6
Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը			130		
Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը			180		

Արագածավան համայնքի էներգահամակարգը կառավարվում է Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության կողմից:

Համայնքում աղբահանության և ջրամատակարարման ծառայությունները իրականացվում են Արագածավանի կոմունալ ծառայության կողմից:

Համայնքը չունի խմելաջուր, բայց ապահովված է արտեզյան ջրով:

Արագածավան բնակավայրի 35 կմ-ոց ջրագիծը ամբողջությամբ փոխված է: Գործում է 6-8 ժամյա ջրամատակարարում: Բնակավայրը կարիք ունի ջրաչափերի և դիտահորերի:

Բնակավայրերում աղբը տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրում, որտեղ պարբերաբար կատարվում է բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է ոչ բավարար տեխնիկայի պայմաններում, փողոցներում աղբամաններ չեն տեղադրվել և բնակիչներն աղբը լցնում են փողոցների եզրերին, որտեղից աղբահավաք մենքենան հավաքում է: Աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում գյուղի արտաքին տեսքի եւ սանիտարահիգիենիկ պայմանների վրա: Աղբահանության բնագավառում դեռևս շատ անելիքներ կան:

Արագածավան գյուղում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Գյուղում գործում է 28 խանութ, 2 հացի փուռ, 2 ավտոտեխսպասարկման կայան, 2 պանրի արտադրամաս, 2 գազալիցքավորման կետ, 4 վարսավիրանոց, 3 հարսանյաց սրահ :

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում հիմնվել են պտղատու այգիներ, ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի, բոստանային կուլտուրաներ:

Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է տարբեր տեսակի պտուղների, հացահատիկի, բոստանային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար:

Հողագործությունն ու անասնապահությունը հանդիսանում են Արագածավան համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոռոգման ջրի թանկ լինելով՝ կապված համայնքի ոռոգման ջրի գերնորմատիվային ծախսերի հետ, ոռոգման համակարգի քայքայված վիճակով, հակակարկտային կայանների բացակայությամբ:

Տարեկան կտրվածքով համայնքի գյուղատնտեսական արտադրանքի ծավալները ներկայացված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19.

Արտադրանք /տոննա/	Արագածավան		Արտենի		Գետափ		Լուսակն	
	2021 /փաստ/	2022 /կանխ/	2021 /փաստ/	2022 /կանխ/	2021 /փաստ/	2022 /կանխ/	2021 /փաստ/	2022 /կանխ/
Խաղող	213	250	204	220				
Ծիրան	4400	5500	3400	5000	50	85	75	105
Խնձոր	700	900	990	1200				
Սալոր	25	30	140	250				
Զմերուկ	3500	400	3300	3600			10	20
Ցորեն	138	150	105	120	20	50	25	30
Գարի	130	150	630	800	100	200	80	100
Առվույտ	6500	8000	4347	5000	1500	1500	1200	1400

Արագածավան բնակավայրում գործում են հանրակրթական 2 դպրոցներ: Երկու դպրոցներում միասին սովորում են 809 աշակերտ, աշխատում՝ 85 ուսուցիչ:

Թիվ 2 միջնակարգ դպրոցը հիմնանորոգված է : Թիվ 1 միջն դպրոցի դահլիճն ունի անհապաղ վերանորոգման կարիք:

Գյուղն ունի 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն, ուր հաճախում են 200 սան, աշխատում է 22 մարդ: Գործում է նաև 1 երաժշտական դպրոց, որտեղ հաճախում է 75 աշակերտ: Դպրոցն ունի 13 աշխատակից:

2020-2021թ-ի ուսումնական տարում սուբվենցիոն ծրագրերով ամբողջովին գազաֆիկացվել և ջեռուցվել է Արագածավանի մանկական երաժշտական դպրոցը, Առողջության կենտրոնը, Արագածավանի մանկապարտեզը: Երաժշտական դպրոցի շենքը ունի վերանորոգման կարիք, մանկապարտեզինը՝ հարդարման:

Արագածի պեռլիտի հանքավայրի հայցվող տարածքից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնականա գնահատման հայտը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը, համայնքին իրականացվելիք սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը:

4.3. Պատմության, մշակութային հուշարձաններ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտների թվին են պատկանում պատմության և մշակույթի հուշարձանները:

ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 628 որոշման և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով:

Համաձայն այս փաստաթղթի՝ Արագածավան համայնքի վարչական տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ փաստագրված չեն:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արագածի պեռլիտի հանքավայրի «Հիդդեն Գոլդ» ՍՊ ընկերության կողմից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

5.1. Մթնոլորտային օդ.

Բացահանքից մթնոլորտ են արտանետվում փոշի և գազեր: Դրանց աղբյուրներն են հանդիսանալու բացահանքը, տրանսպորտը և լցակայանները: Փոշին առաջանալու է ավտոինքնաթափի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով, լցակայանի մակերեսից և տեղափոխվող բեռից: Արտանետվելու են նաև ածխածնի օքսիդ, ազոտի երկօքսիդ, մուր (կախված մասնիկների): Նախնական գնահատականներով, ծրագրավորվող բացահանքի սահմաններում տարեկան կառաջանա մոտ 8տ փոշի, 0.11տ մուր, 1.3տ ազոտի օքսիդ, 0.8տ ածխածնի օքսիդ: Արտանետումների մանրակրկիտ հաշվարկը, իչպես նաև ցրման համակարգչային մոդելավորումը կներկայացվի աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում:

5.2. Ջրային ավազան.

Արագածի պեռլիտի հանքավայրի տարածքը գործնականում ջրագուրկ է: Հանքավայրի տարածքում 1972-73թ.-ին կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ստորերկրյա ջրերի հորիզոններ և ելքեր չեն հայտնաբերվել: Մակերևութային ջրային հոսքեր հանքավայրի տարածքում չկան: Նույնը վկայում է բազմամյա արդյունահանման աշխատանքների փորձը:

Հայցվող տարածքից մոտ 60մ արևմուտք և մոտ 108մ արևելք անցնում է Սելավ-Մաստարա գետի չորահունները, իսկ բուն Սելավ-Մաստարա գետը հոսում է հանքավայրից մոտ 3.1-3.38կմ հարավ: Թալինի ջրանցքի ձախ ճյուղը անցնում է հայցվող տարածքից մոտ 2.4մ, Թալինի թունելը՝ մոտ 3.5կմ հեռավորությունների վրա:

«Հիդդեն Գոլդ» ՍՊ ընկերությունը 2022 թվականի մայիսի 26-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստացել է ջրօգտագործման և ջրհեռացման անհատական նորմեր (№46): Տնտեսական-կենցաղային ջրածախսը իր մեջ ներառում

է աշխատողների տնտեսական, ճաշարանի, ցնցուղարանի և այլ նպատակներով օգտագործվող ջուրը: Օժամդակ և օգնող ջրածախսը ներառում է կաթսայատան, բացահանքի ավտոտրանսպորտի սպասարկման և լաբորատորիայի համար ծախսված ջրի ծավալները: Խմելու ջուրը գնվում է Արագածավան գյուղի առևտրի սրահներից շալցված տարբերակով ու ընկերության մեքենայով տեղափոխվում հանք:

Բնական ջրային ռեսուրսների վրա ազդեցությունների դրսևորում չի կանխատեսվում, քանի որ հայցվող տարածքում մակերեսային և գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են հորատի պ անթափանց բետոնապատ զուգարանում, որը նախատեսվում է պարբերաբար դատարկել տարածաշրջանում գործող և նմանատիպ ծառայություններ մատուցող ընկերությունների ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:

5.3. Հողային ծածկույթ.

Հայցվող տարածքում բացահանքի շահագործման և ենթակառուցվածքների ստեղծման արդյունքում առաջանալու են մոտ 10հա խախտված տարածքներ:

Որպես հնարավոր ազդեցություն դիտարկվում է նաև հայցվող հողերի աղտոտումը նավթամթեքներով:

5.4. Բուսական և կենդանական աշխարհ.

Քանի որ Արագածի պեռլիտի հանքավայրը շահագործվում է ավելի քան 50 տարի, ապա տարածաշրջանի էկոհամակարգերը զգալիորեն ենթարկված են մարդածին ազդեցության:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Տարածքի բուսածածկը ներկայացված է ՀՀ տարածքին բնորոշ կիսանապատային-տափաստանային լայն տարածքում ունեցող տեսակներով: ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հանքավայրի տարածքում չեն դիտարկվել: Բուսական աշխարհին հնարավոր վնաս կարող է հասցնել հողերի

խախտման արդյունքում, ինչպես նաև տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքի հետևանքով:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները լինելով շարժուն, համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն:

Տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

5.5. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներից հանքավայրին ամենամոտ գտնվողը «Արագածի ալպյան» պետական արգելավայրն է ավելի քան 41 կմ հեռավորության վրա:

Հանքավայրի տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանները «Մեծ Արտենի» էքստրուդիվ կոնն է և «Փոքր Արտենի» հրաբուխը: Հայցվող տեղամասերի և բնության հուշարձանների միջև հեռավորությունները կազմում են համապատասխանաբար մոտ 7 կմ և 6.4 կմ:

Նշված հեռավորությունները վկայում են, որ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա պեռլիտի արդյունահանման հետևանքով բացասական ազդեցություններ չեն դրսևորվելու:

5.6. Պատմամշակութային հուշարձաններ

Արագածավան բնակավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն, հետևաբար ծրագրավորվող օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները պատմամշակութային հուշարձանների իրավիճակի վրա որևիցե ազդեցություն չեն ունենալու:

5.7. Թափոնների առաջացում

Ընդերքօգտագործման թափոնները հայցվող տարածքում ներկայացված են թույլ տեսակավորված փխրուն նյութերով բաց-շագանակագույն հողերով, կավավազներով և ավազներով, պեռլիտի ու պեմզայի մանրախճի և ապարների բեկորների

ներփակումներով մոտ 30.0հազ.մ³ ծավալով: Հեռացման ենթակա հողաբուսական շերտի և բերվածքային առաջացումների խավալները կհստակեցվեն աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում :

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած փխրուն մակաբացման ապարները հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով, իսկ կավային ապարները՝ 34000130 01 99 5 ծածկագրով: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Պեղիտի արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ զուգակցված է մի շարք այլ թափոնների առաջացում, այդ թվում.

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան: Ծածկագիրը՝ 921 10100 13 01 2: Կազմը՝ կապարե թիթեղներ 70-75%, պլաստմասե իրան՝ 10-13%, էլեկտրոլիտ – 15-20%: Թունավոր է, էկոթունավոր, հրդեհապայթյունավտանգ չէ: Հանքավայրում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

- Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ: Ծածկագիրը՝ 54100203 02 03 3: Կազմը՝ յուղ 95%, մեխանիկական խառնուկներ 1.8%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Հանքավայրում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

- Բանեցված շարժիչների յուղեր: Ծածկագիրը՝ 54100201 02 03 3: Կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Հանքավայրում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

- Բանեցված դողածածկեր: Ծածկագիրը՝ 57500200 13 00 4: Կազմը՝ բութադինային կաուչուկ 97-99%, պողպատ՝ 1-3%: Էկոթունավոր է, պայթյունավտանգ չէ, բայց կրակի առկայությամբ կարող է այրվել: Կոռոզիոն ակտիվության տեսակետից ակտիվ չէ, ռեակցիոնունակ չէ: Հայցվող տարածքում այս տեսակի թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերությունը նախատեսում է դրանք տրամադրել ՊՆ-ին, սահմանային դիրքեր տեղափոխելու և ինժեներական ամրակայման աշխատանքների ժամանակ օգտագործելու համար:

- Չտեսակավորված կենցաղային աղբ: Ծածկագիրը՝ 91200400 01 00 4: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ: Թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Թափոնների ծավալները կճշգրտվեն աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում :

5.8. Աղմուկ, թրթռումներ

Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն : Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ: Աղմուկի ազդեցությունը ազդակիր Անգեղակոթ բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, ժամանակավոր լցակայանների ձևավորումը, ճանապարհներին տրնասպորտի տեղաշարժը:

Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 80դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$L_{\text{ատար}} = L_{\text{էկվ}} - \Delta L_{\text{ահեռ}} - \Delta L_{\text{էկր}} - \Delta L_{\text{կանաչ քանաձևով, որտեղ՝$

$L_{\text{էկվ}}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $L_{\text{էկվ}}=80\text{դԲԱ}$,

$\Delta L_{\text{ահեռ}}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta L_{\text{ահեռ}}$ կազմում է 15դԲԱ ,

$\Delta L_{\text{էկր}}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (նախագծվող բացահանքի տարածք, այլ ընկերությունների կողմից ձևավորված ենթակառուցվածքներ), $\Delta L_{\text{էկր}}=20\text{դԲԱ}$,

$\Delta L_{\text{կանաչ}}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta L_{\text{կանաչ}}=10\text{դԲԱ}$:

Աղմուկի մակարդակը Արագածավան գյուղի մոտ կկազմի՝

$L_{\text{ատար}} = L_{\text{էկվ}} - \Delta L_{\text{ահեռ}} - \Delta L_{\text{էկր}} - \Delta L_{\text{կանաչ}} = 80 - 15 - 20 - 10 = 35\text{դԲԱ}$ (նորման 45դԲԱ):

Գիշերային ժամերին արդյունահանման աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

Թոթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ , իսկ X - Y առանցքներով՝ 112դԲԱ :

5.9.Սանիտարական-պաշտպանիչ գոտի

Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման ՄՆ 245-71 սանիտարական նորմերով առանց պայթեցման աշխատանքների կիրառման շինանյութերի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանված է 50մ սանիտարական պահպանության գոտի: Հեռավորությունը հայցվող տարածքից մինչև Արագածավա, Հակկո և Կանչ գյուղերի մոտակա բնակելի շինությունները կազմում է համապատասխանաբար 4.35կմ , 3.4կմ և 3.6կմ , ինչը գերազանցում է սահմանված նորման 87 , 68 և 72 անգամ:

Գործող բացահանքի արտադրական հրապարակում ստեղծված են աշխատակիցների սննդի և հանգստի համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Առկա է լվացարան, որը ապահովված է մշտական ջրով: Առկա է որպես ճաշարան ծառայող վազոն-տնակ, ինչպես նաև հանգստի համար նախատեսված վազոն-տնակ:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

6.1. Տեղամասի տարածքում նավթամթերքների, բանեցված յուղերի, քսայուղերի կուտակման/պահեստավորման բացառում :

6.2. Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատապիսան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

6.3. Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

6.4. Փոշենստեցման նպատակով ջրցանում : Ջրի ծախսը 1մ^2 տարածքում կազմում է $0.5\text{լիտր}/\text{մ}^2$: Փոշենստեցման նպատակով անհրաժեշտ տեխնիկական, կենցաղային նպատակներով օգտագործվող և խմելու ջրի հաշվարկը կներկայացվաի աշխատանքային նախագծի մշակման փուլում: Տեխնիկական ջրի պահանջարկը բավարարվելու է ընկերությանը տրված ՋԹ սահմաններում:

6.5. Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով : Արտաքնոցի հորում կուտակված նյութի պարբերական տրոհում կենսաակտիվ մանրէաբանական նյութերի կիրառմամբ : Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով :

6.6. Լեռնակապիտալ աշխատանքների ժամանակ մերձակերևոթային մասի տարանջատված հեռացում և կուտակում (0.15մ առավելագույն հզորությամբ բաց-շագանակագույն քարքարոտ, կարբոնատային-ցեմենտացված հողանման զանգված, որը խառնված են դելյուվիալ կավավազային-ավազակավային նստվածքների հետ) : Հողաբուսական շերտի լցակույտի մակերեսին բազմամյա հացահատիկային բույսերի ցանք :

6.7. Հանքի խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա : Ռեկուլտիվացման ենթակա տարածքների և աշխատանքների

արժեքների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվությունը կներկայացվի աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում : Ռեկուլտիվացիոն աշխատանքների համար հաշվարկված գումարները հատկացվելու են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

6.8. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, կկազմվի հանքի փակման վերջնական ծրագիրը, որտեղ կնկարագրվեն բացահանքի, ենթակառուցվածքների, արտադրական հրապարակի և ճանապարհների լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

6.9. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի մշակում՝ աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում :

6.10. Հանքի փակման ծրագրի մշակում աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում :

6.11. Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում : Ընթացակարգն ուղղված կլինի հողային աշխատանքների ընթացքում բացահայտվելիք բոլոր գտածոներին՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- Համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- Հուշարձանների զննության իրականացում, նախքան շինարարական աշխատանքների սկիզբը, երբ հողը մաքրված է ,
- Հնագետների տեղաբաշխումը շինարարության վայրերը վերահսկելու համար, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը հողային աշխատանքների իրականացման ընթացքում,
- Արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում և գնահատում հնագիտական մոնիտորինգի միջոցով;

- Անհրաժեշտության դեպքում պետական մարմինների ծանուցում,
- Պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շինարարական աշխատանքների ուշացումները,
- Մոնիտորինգային գործունեության և պատահական գտածոների արձագանքման վերստուգիչ գրանցումների վարում:

6.12. Ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում: Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

6.13. Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս:

6.14. Տեխնիկա-տրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:

6.15. Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:

6.16. Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:

6.17. Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:

6.18. Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով հանքավայրի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:

6.19. Նախքան լեռնակապիտալ աշխատանքների սկիզբը հայցվող տարածքում կենսաբան և բուսաբան մասնագետների կողմից վերստուգիչ րթուղային ուսումնասիրությունների իրականացում: Հայտնաբերման դեպքում՝ թռչունների բների տեղափոխում, սողունների հավաքում և տեղափոխում հարակից, ընդերքօգտագործման աշխատանքներով չճանրառեփնված տարածքներ:

6.20. Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգության տեխնիկայի կանոններին:

6.21. Սելավ-Մաստարա ձորակին սահմանակից հատվածներում գաբիոնների կառուցում:

6.22. Հանքավայրի տարածքի պարագծով տեղադրվելու են նախագգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:

6.23. Արտադրական տարածքի կանաչապատում թփերով և գաճաճ ծառատեսակներով:

Շահագործման աշխատանքների բնապահպանական կառավարման միջոցառումների պլանը ներկայացված է նաև աղյուսակ 20-ում:

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1	2	3	4
Արդյունահանման աշխատանքների փուլ			
Պեռլիտի արդյունահանում	Հողերի խախտում նախագծվող բացահանքի տարածքում	Խախտված տարածքների ռեկուլտիվացիա աշխատանքների ավարտից հետո	Բացահանքի, լցակույտի, ճանապարհների ռեկուլտիվացված տարածքներ
	Մթնոլորտային օդի աղտոտում փոշու և ծխագազերի արտանետումներով	ՍԹԱ նորմատիվներով սահմանված ցուցանիշների պահպանություն	Մշտադիտարկումների արդյունքները համապատասխանում են իրավական ակտերի և ՍԹԱ նորմատիվների պահանջներին
	Արտադրական տարածքի աղտոտում նավթամթերքների մնացորդներով	Արտադրական հրապարակի տարածքում նավթամթերքների մնացորդների պահեստավորման բացառում	Մշտադիտարկումների արդյունքները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրամանի պահանջներին
			Մեքենաների սպասարկումը կատարվում է հարակից բնակավայրերի մասնագիտացված ընկերություններում
	Տարածքի աղտոտում կենցաղային կեղտաջրերով	Կենցաղային կեղտաջրերի հավաքում անջրթափանց հորում, պարբերական դատարկում համապատասխան ծառայություն մատուցող ընկերությունների կողմից	Տարածքում սանիտարական նորմերի պահպանություն

1	2	3	4
Պետլիտի արդյունահանում	Տարածքի աղտոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողություններում, աղբահանության իրականացում համապատասխան ծառայություն մատուցող ընկերությունների կողմից, աղբահանության պայմանագրի կնքում	Տարածքում սանիտարական նորմերի պահպանություն
	Հարակից տարածքների կենսաբազմազանության տեսակային կազմի փոփոխություն	Տարեկան մեկ անգամ տարածքների զննում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից	Մերմերի հավաք՝ հետագա կենսաբանական ռեկուլտիվացիան իրականացնելու համար : Կենդանիների տեսակային կազմի վերականգման համար նպաստավոր լանդշաֆտի ձևավորում
	Հողերի օտարում բացահանքի և արտադրական ենթակառուցվածքների ստեղծման համար	Ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունավետ իրականացում	Հողերի վերադարձ տնտեսական շրջանառության մեջ
Տրանսպորտի տեղաշարժ, բեռնափոխադրում	Մթնոլորտային օդի աղտոտում փոշու և ծխազագեղի արտանետումներով	ՍԹԱ նորմատիվներով սահմանված ցուցանիշների պահպանություն	Մշտադիտարկումների արդյունքները համապատասխանում են իրավական ակտերի և ՍԹԱ նորմատիվների պահանջներին

7. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բացահանքում բոլոր աշխատանքներն իրականացվելու են հաշվի առնելով «Բաց եղանակով օգտակար հանածոների հանքավայրի մշակման անվտանգության միասնական կանոններ»-ի պահանջները:

Վթարներից խուսափելու համար անհրաժեշտ հիմնական պայմանները թվարկված են ստորև՝

- մուտքը բացահանքի տարածք իրականացվում է ձեռնարկության ղեկավարության կողմից տրված անցագրերով;
- բացահանքի շինությունների վրա, մարդկանց կուտակման վայրերում և շարժման երթուղիներում պետք է փակցվեն տեխնիկական անվտանգությանը վերաբերող ցուցադրական միջոցներ: Դրանք են համապատասխան ցուցանակները, նշանները, պլակատները, թույլատրող և արգելող նախազգուշական ազդագրերը, որոնց նշանակությանը պետք է ծանոթ լինեն բացահանքի բոլոր աշխատողները;
- նախապես ստուգվում է նախկին հետախուզական աշխատանքների հետևանքով դատարկությունների առկայությունը, հայտնաբերելու դեպքում նրանց տանիքի հանքաշերտը և պարփակող ապարները հաջորդաբար, ամբողջ հզորությամբ (25-30մ) փլուզվում են պայթեցման աշխատանքների միջոցով;
- լեռնատրանսպորտային սարքավորումները տեղադրվում են մշակված տարածքների և նստվածքների վերին եզրից ավելի քան 3-4մ հեռավորության վրա, փլուզման գոտու սահմաններից դուրս և որմնակապվում;
- բացահանքում հորատող հաստոցը պետք է տեղակայվի հանքաստիճանի հարթեցված հրապարակում այնպես, որ հաստոցի թրթուրները հանքաստիճանի եզրագծից լինեն առնվազն 2 մ հեռավորության վրա:
- հանքաստիճանի վրա հորատման հաստոցի տեղաշարժը բարձրացրած կայմով թույլատրվում է միայն հարթեցված հորիզոնական հրապարակով: Էլեկտրահաղորդման գծերի տակով անցնելիս կայմը պետք է իջեցվի: Արգելվում է կայմի բարձրացման կամ իջեցման ժամանակ մարդկանց գտնվելը հորատման հաստոցի առջևում կամ հետևում: Հորատման հաստոցի տեղափոխման ժամանակ հորատող գործիքը պետք է հանվի կամ հուսալիորեն ամրացվի;

- հորատման հաստոցի վերհանող ճոպանը պետք է հաշվարկվի առավելագույն բեռնվածքով և ունենա ամրության հնգապատիկ պաշար: Պարբերաբար, առնվազն շաբաթական մեկ անգամ, ճոպանը պետք է ենթարկվի արտաքին զննման: Ճոպանի մետաղալարերի ցցված ծայրերը պետք է կտրվեն, իսկ հյուսվածքի մի քայլի վրա 10 տոկոսից ավելի կտրված մետաղալարերի առկայության դեպքում այն պետք է փոխվի ;

- հրդեհամարման համար ջրի ռեզերվուարում պահվում է 216մ³ ծավալով մշտական ջրի պաշար ;

- բուլդոզերային լցակույտի առափը բեռնաթափման ամբողջ ճակատով պետք է ունենա 3⁰-ից մինչև 5⁰ ընդլայնական թեքություն՝ ուղղված եզրից դեպի խորքը: Եզրի ամբողջ երկարությամբ հարկ է ունենալ ապարային լցույթ ;

- լցակույտի հրապարակը համահարթեցնելիս բուլդոզերը շեպի եզրին կարող է մոտենալ միայն դանակով դեպի առաջ: Արգելվում է բուլդոզերի մոտեցումը լցակույտի եզրերին հետընթացով;

- փոխաբեռնման կետերը, որոնցում որպես միջանկյալ օղակ օգտագործվում են էքսկավատորներ, պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) հանքազանգվածաշերտի բարձրությունը պետք է սահմանվի՝ ելնելով հանքազանգվածի ֆիզիկամեխանիկական հատկություններից, բայց ոչ ավելի էքսկավատորի շերտի ման բարձրությունից.

2) լցակույտի յուրաքանչյուր սեկտորի լցման ժամանակ հանքազանգվածաշերտի թեքման անկյունը պետք է համապատասխանի պահեստավորվող հանքազանգվածի բնական թեքման անկյանը;

- սեկտորում աշխատանքները պետք է կատարվեն համաձայն բացահանքի ղեկավարության կողմից հաստատված աշխատանքների կատարման տեղեկաթերթիկի, իսկ տեղանքը նախատեսվում է կահավորել հատուկ նշաններով և ցուցատախտակներով;

- փոխաբեռնման կետի բեռնաթափման հրապարակների չափերը պետք է ապահովեն արտադրությամբ զբաղվող բոլոր մեքենաների և մեխանիզմների բնականոն և անվտանգ աշխատանքը՝ դրանց տեղաշարժման և ուղեւարանցման ժամանակ: Բեռնաթափման աշխատանքների կատարման ճակատի երկարությունը

և բեռնաթափման հրապարակի լայնությունը պետք է որոշվեն՝ ելնելով տրանսպորտային միջոցների (ավտոմեքենաների, բուլդոզերների և այլն) եզրաչափերից, տեղաշարժման աշխատանքների կատարման ընդունված սխեմայից և շրջադարձի շառավղից՝ հաշվի առնելով բեռնաթափմանը կանգնած և սպասող տրանսպորտային միջոցի անհրաժեշտ անվտանգ հեռավորությունը, որը պետք է լինի 5 մ-ից ոչ պակաս;

- բեռնաթափման հրապարակի սեկտորում մի քանի մեխանիզմների (ավտոմեքենաների, բուլդոզերի և այլն) և ներքին հորիզոնում (էքսկավատորի գտնվելու վայրում) միաժամանակյա աշխատանքը պետք է կատարվի՝ համաձայն աշխատանքների կատարման նախագծի;

- բեռնաթափման հրապարակում աշխատող ինքնաթափ մեքենայի և բուլդոզերների աշխատանքային գոտում կողմնակի մարդկանց գտնվելը կամ որևէ այլ աշխատանք կատարելն արգելվում է: Նրանք պետք է գտնվեն աշխատող մեխանիզմից 5 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

- լցակայանում փոխաբեռնման աշխատանքների իրականացման դեպքում փոխաբեռնման կետի տեղադրման վայրը, ինչպես նաև դրա կազմավորման և շահագործման կարգը, պետք է որոշվեն նախագծով, որտեղ պետք է նախատեսվեն դրա սեկտորների չափերը և անհրաժեշտ քանակը, մարդկանց տեղաշարժման ուղիները, ձայնային և լույսային ազդանշանները և այլն;

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արագածի պեռլիտի հանքավայրի տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

i. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանքավայրը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,

ii. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նապատակով նախատեսվում է հանքում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- կանգնել բացօթյա տարածքում,
- ապահովել լցակույտի տարածքում և լցակույտի կազմակերպման վայրից՝ ռելիեֆով ներքև գտնվող տարածքներում աշխատանքներ իրականացնող անձնակազմի տարահանումը,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- հանքի սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարահանումը,
- արտադրական հրապարակում ապահովել առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի առկայությունը,
- ապահովել հրդեհչիջման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների առկայությունը արտադրական հրապարակում:

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի

գործողությունների պլան: Արտադրական տարածքի հատուկ հատկացված վայրերում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

Բացահանքի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Հայցվող տարածքը հարակից է Սելավ-Մաստարայի չորահուներին, որոնց տարածքում պարբերաբար ձևավորվում են սելավներ: Աշխատանքների ընթացքում զարնան-ամռան ամիսներին՝ ապրիլից-հունիս, հանքի պետք սելավների հետ կապված արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելու նպատակով, յուրաքանչյուր օր հետևում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական տեղեկատվությանը: Սելավների ձևավորման վտանգի դեպքում, հանքի տարածքից նախատեսվում է հեռացնել ողջ անձնակազմը և տեխնիկական միջոցները, տեղափոխելով դրանք Արագածավան գյուղում գտնվող արտադրական տարածք:

Հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության, որի արդյունքում տրամադրվում է փորձաքննական եզրակացություն, անվտանգության վկայագիր:

9. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Արագածի պեռլիտի հանքավայրի շահագործման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. արտադրական հրապարակի տարածքի մշտադիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածության ուսումնասիրության նպատակով,
3. լցակույտում պահեստավորված մակաբացման ապարների վերին, պոտենցիալ բերրի շերտում հումուսի պարունակություն,
4. հանքի հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,
5. աղմուկի մակարդակի վերահսկողություն:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Կենսաբազմազանության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Աղյուսակ 21.

Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի վայրը	Ազդեցության դրսևորման հիմնական աղբյուրները	Մոնիթորինգի տեսակը, պարբերականությունը
1	2	3	4
Անօրգանական փոշի, ծխազագեր	Հայցվող տարածք, ըստ աշխատանքների իրականացման վայրի (Մթն.նմ.-1)	Մեքենաների տեղաշարժ, արդյունահանման աշխատանքներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
		Լցակույտառաջացման աշխատանքներ	

1	2	3	4
Հողային ռեսուրսներ	Արտադրական հրապարակի տարածք (Հող.նմ.-1)	Աղտոտում նավթամթերքներով	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, ամսեկան մեկ անգամ
	Լցակայանում պահեստավորված ժամանակակից բերվածքային առաջացումներ (Հող.նմ.-2)	Հումուսի պարունակություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, տարեկան մեկ անգամ
Աղմուկ և թրթռումներ	Բացահանքի Տարածք (Աղմուկի մշտադիտ.)	Մեքենաների տեղաշարժ, արդյունահանման աշխատանքներ	Չափիչ սարքեր, տարեկան մեկ անգամ
Բուսական ծածկ և կենդանական աշխարհ	Հանքավայրի տարածք և հարակից շրջան	Արդյունահանման աշխատանքներ	Դիտողական զննում, երթուղիներ, ֆոտոթակարդներ, հետքերի, սննդի մնացորդների և էքսկրեմենտների զննում, տարեկան մեկ անգամ
Ջրային ռեսուրս	Մելավ- Մաստարայի չորահուն	Արդյունահանման աշխատանքներ	Նմուշարկման աշխատանքներ, ամսեկան մեկ անգամ ջրային հոսքի ձևավորման շրջանում


Տարեկան կտրվածքով մշտադիտարկումների իրականացման համար հատկացվելու է մոտ 950.0հազ.դրամ :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 12-ում:

Մշտադիտարկման կետերի տեղադիրքը նախնական է, դրանք կձգգրտվեն բացահանքի շահագործման աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում :

Մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ

Մոտորղինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



Նկար 12.

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
7. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
8. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
9. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
10. “Флора и растительность степей Армении”, Файвуш Г.М., диссертация на соискание ученой степени доктора биологических наук, отдел геоботаники и экологии растений Института ботаники АН Республики Армения
11. «Животный мир Армянской ССР». Даль С.К ,1954
12. ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայք
13. «Заповедники СССР. Заповедники на Кавказе». Издательство "Мысль" 1990
14. Թամանյան Կ., Գաբրիելյան Է., Ֆայվուշ Գ., Հովհաննիսյան Մ., Ներսեսյան Ա., Արևշատյան Ա., Խանջյան Ն., Վարդանյան Ժ., “Հայաստանի էնդեմիկ բույսերի կարմիր ցուցակ”
15. Պետական ցուցակ Հայաստանի հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Արագածոտնի մարզ, Հավելված Հայաստանի Հանրապետության կառավարություն 2002 թվականի մայիսի 29-ի №628 որոշման